

Վասակ Սիւնի կը գլխէր Բարակի, հաւանաբար ծանօթ ըլլալով անոր հակաարար եւ հակա-մահապառն կոչումներուն որոնք անշուշտ սկսած ըլլալու էին դեռ 817 թուականէն: Բարակ անմիջապէս կը պատասխանէ Վասակ Սիւնիի կոչին եւ միասին կը յարձակին Ծղկաց զաւառի Շաղատու բերդին մէջ ամրացած Մրվանի ապատակ Տաճիկներուն վրայ, եւ եհար ըզնուս եւ արար փախստական (Կաղանկատուացի), կամ եհար զՄրվան սաստկապէս, եւ փախստական արար (Օրբէլեան):

Վասակ Սիւնի իր զինակից Բարակի հետ ձեռք բերած այս յաղթանակէն վերջ՝ կը մեռնի, կամ ինչպէս մեր այս երկու պատմիչներն ալ կը կրկնեն, Վասակ Սիւնեաց տէրը ի նմին ամի վախճանի կամ վախճանեցաւ:

Դեռ հազիւ Վասակ մեռած էր, երբ Բարակ գղաւտրն նորա (Վասակ Սիւնիի) ի կնուքիս իւր կ'առնէ: Ըստ Երեւոյթի, այս ամուսնութիւնը խոտելի չէ նկատուեր, նըկատի առնելով Բարակի իսլամատեաց աղանդաւոր հանդամանքը: Եթէ Բարակ ո'ր եւ է բռնութիւն բանեցուցած էր այս ամուսնութեան համար, մենք ատոր մասին ոչ մէկ ակնարկութեան կը հանդիպինք մեր պատմիչներուն քով: Սակայն Օրբէլեան կը վկայէ որ Բարակ՝ կ'երեւի իբր ժառանգութիւն՝ ամուսնանալէն վերջ առկէր ընդ ձեռամբ զգաւառն (Սիւնեաց):

Երկար չի տեւեր, եւ Բաղասականայ զաւառը կ'ըմբոստանայ Բարակի դէմ: Մեր երկու պատմիչներն ալ նոյն բերնով կը վկայեն որ անհնազանդ եղեւ զաւառն Բաղասականայ հրամանի եւ օրինաց Բարանայ (ըստ Կաղանկատուացիի՝ ՅԱՆՕՐԷՆ Բարանայ): Բարակ ել ի Պարսից եւ էառ աւերեաց գերկիւրն եւ ի սուր տուերի էարկ զկանայս եւ զմանկուսն Բաղաց (Կաղանկատուացի):

Օրբէլեան սակայն կու տայ ուրիշ մանրամասնութիւն մը հոս: Բարակ կու դայ ապստամբութիւնը զսպելու՝ եկեալ ձեռնուտուքեամբ Արլ-Ասաղայ Ազվանեցոյ,

կոտորեաց սաստիկ եւ անողորմ զգաւառն Բաղասականայ. եւ մաշեաց մինչեւ ի կանայս եւ մատաղ մանկոխս:

Բաղասական կամ Բաղաց զաւառ (Բաղք) կը գտնուէր Սիւնեաց նահանգին հարաւային կողմը: Եղած է ժամանակ՝ որ այդ սահմաններուն մէջ կը հաշուուէր 43 բերդեր, 1500էն աւելի գիւղեր (48 վանքերով): Սահմանակից էր Ծղկաց զաւառին:

Բարակ ետ կը դառնայ՝ Սիւնեաց ապստամբութիւնը ճգմելու համար: Այս անգամ Բարակին կը զինակցէր Օրբէլեանի Արլ-Ասաղ Ազվանեցի կոչուած հայ իշխանը, այլուստ ծանօթ՝ իբր Եսայի Ապոմոսէ, եւ արար պատմիչներուն Իսաբին Եուսուֆ բին Իսթիֆանուս: Իր մասին իր կարգին կարելի եղած մանրամասնութեամբ պիտի խօսինք յետոյ:

Բաղաց զաւառը Բարակի կողմէ սուր սուրերի մաշուելէ յետոյ, յաջորդ տարին Բարակ կ'արշաւէ Գեղարքունի: Եւ անտի (Բաղասականէն) ի միւս տարին էանց Բարան ի զաւառն Գեղարքունի եւ էարկ ի սուր գրեակիչսն ոգիս իբրեւ տասն եւ հինգ հազարս, եւ զմեծ Մաքեմացոց մայրաքաղաքն այրեաց, մնաց միայն ջրաղացն եւ այլ ոչ ինչ. եւ էր քիւն Հայոց երկու հարիւր եօթանասուն եւ վեց (Կաղանկատուացի): Հայոց 276ը հաւասար է 827ին, որ թուականն է Բարակի Գեղարքունիք աւերելուն: Ուրեմն Բաղաց զաւառի աւերումը կ'իյնայ 826ին:

Օրբէլեան կը կրկնէ Կաղանկատուացիի վկայութիւնը: Կաւելցնէ որ Մաքեմացոց հռչակաւոր ուխտը, որուն Մաքեմացոց մայրաքաղաք կոչումը կու տայ Կաղանկատուացի՝ հաւանաբար կեղբորնական մեծնաստան մը ըլլալուն համար, Բարակէ կը մատնուի կրակի եւ կողոպուտի: Բարեբախտաբար վանականները նախիւմաց եղեալ՝ ձերկու խոտմբով կը փախչին եւ կ'ազատին սրածուծենէ:

Բարակ՝ Գեղարքունիքը աւերելէ վերջ՝